

Հաստատված է
**ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱԼԵՐ ԵՎ
 ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի « »-ի**
 նիստում (արձ. թիվ)
 ամբիոնի վարիչ՝

.....
 (ստորագրություն)

 (ամիս ամսաթիվ)

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Տնտեսագիտություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄՔԻՈՆ <ul style="list-style-type: none"> ▪ մասնաշենք/սենյակ ▪ հեռախոս ▪ Էլ հասցե ▪ Web կայքի հասցե 	Հասարակագիտական առարկաների եվ հոգեբանության
ՀԵՂԻՆԱԿՆԵՐ	Ռ.Սարգսյան /Տնտ. գիտ.թեկ/
ՈՒՄ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս, 2-րդ կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ	4 (չորս)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	<p>«Տնտեսագիտություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 72 ժամ, որից 36 դասախոսություն, 36 սեմինար, 8 56 ինքնուրույն աշխատանք:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում առանց եզրափակիչ գնահատման:</p>
ՆԱԽԱԴԱՅՄԱՆ	Դասընթացը կառուցվում է «Տնտեսագիտություն», առարկայի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐՆԵՐ</p>	<p>Դասընթացի հիմնական նպատակն է իրավապահ մարմինների ապագա աշխատակիցների տնտեսագիտական գիտելիքների ուսուցանումը որպես քաղաքացի, վաստակող-ծախսող, ֆիզոլոգիական անձ, այն աշխատանքում ու գործնական կյանքում կիրառելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Իրավապահ մարմնի ապագա աշխատակցի կողմից տեսագիտական հիմնական օրենքների ու հասկացությունների նշանակության իմացությունն է: • Հմտությունների և կարողությունների զարգացում տնտեսագիտական գիտելիքները մասնագիտական խնդիրների լուծման գործում կիրառելու համար: • Նպաստել ապագա իրավապահ մարմնի աշխատակցին անհրաժեշտ մասնագիտական որակների ձևավորմանը: <p>Դասընթացի հիմնական նպատակն է իրավապահ մարմինների ապագա աշխատակիցների տնտեսագիտական գիտելիքների ուսուցանումը որպես քաղաքացի, վաստակող-ծախսող, ֆիզոլոգիական անձ, այն աշխատանքում ու գործնական կյանքում կիրառելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Իրավապահ մարմնի ապագա աշխատակցի կողմից տեսագիտական հիմնական օրենքների ու հասկացությունների նշանակության իմացությունն է: • Հմտությունների և կարողությունների զարգացում տնտեսագիտական գիտելիքները մասնագիտական խնդիրների լուծման գործում կիրառելու համար: • Նպաստել ապագա իրավապահ մարմնի աշխատակցին անհրաժեշտ մասնագիտական որակների ձևավորմանը:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>1. Իմանա՝</p> <p>2. Կարողա՝</p>	<p>Սովորողները պետք է կարողանան՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնասիրել և վերարտադրել տնտեսագիտական մտքի պատմության երախտավորների հայտնագոյծությունների կարեվորագույ դրվագները: <p>հնարավորինս ճիշտ ընտրություն կատարել կիրառելով տնտեսագիտական կարեվորագույն օրինաչափությունները ընտրության զոհաբերության ու այլընտրաքի արձեքի վերաբերյալ</p> <p>Սովորողները պետք է կարողանան՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնասիրել և վերարտադրել տնտեսագիտական մտքի պատմության երախտավորների հայտնագոյծությունների կարեվորագույ դրվագները: • հնարավորինս ճիշտ ընտրություն կատարել կիրառելով տնտեսագիտական կարեվորագույն օրինաչափությունները ընտրության զոհաբերության ու այլընտրաքի արձեքի

<p>3. Տիրապետի՝</p>	<p>վերաբերյալ:</p> <ul style="list-style-type: none"> բացահայտել գործադիր իշխանության դերը տնտեսական հարաբերություններում արդարության սկզբունքի ապահովման գործում: պարտադիր լիցենզավորում պահանջող տնտեսական գործունեության տեսակների վերաբերյալ ստացած գիտելիքներն կիրառել սպասարկվող տարածքում կատարվող աշխատանքներում: կարողանան վեր հանել հանցագործություն ծնող տնտեսական դրդապատճառներ օգտագործել տնտեսագիտական գիտելիքները փաստաթղթերի ուսումնասիրման ու նրանում եղած տեղեկատվության ուսումնասիրման եվ վերլուծության ընթացքում: <p>Սովորողները պետք է հմտանան՝</p> <ul style="list-style-type: none"> ձեռնարկությունների, կազմակերպությունների ելակետային տվյալերի ուսումնասիրման, ինչպես նաև օրինական ու անօրինական տնտեսական գործունեության զանազանման գործում:
----------------------------	--

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Չիմնական	<p>Սամյուելտոն. Տնտեսագիտություն. դասագիրք 2հա: Ա.Սարգսյան „Տնտեսագիտություն բոլորի համար,, „Կիրառական տնտեսագիտություն,, Դասագիրք եվ խնդրագիրք դպրոցականների համար: Ռ. Սարգսյան „Հայաստանի հանրապետությունը եվ շվաքային տնտեսությունը,, Երեվան 1998թ.</p>
Լրացուցիչ	<p>Ռ. Սարգսյան «Հայաստանի հանրապետությունը եվ շվաքային տնտեսությունը,, Եր 1989թ.</p>

<p>ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ</p>	<p>Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2՝) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն՝ առկայության դեպքում)</p>		
<p>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ</p>	<p>Գնահատման արդյունարար միավոր</p>	<p>Գնահատականը տառանշումով</p>	
	<p>18-20</p>	<p>Գերազանց</p>	<p>Միջանկյալ գնահատման միավոր</p>

	<table border="1"> <tr> <td>13-17</td> <td>Լավ</td> <td>Չարց 1</td> <td>Չարց 2</td> </tr> <tr> <td>8-12</td> <td>Բավարար</td> <td>2 միավոր</td> <td>2 միավոր</td> </tr> <tr> <td>0-7</td> <td>Անբավարար</td> <td></td> <td></td> </tr> <tr> <td>0</td> <td>Չներկայացած</td> <td></td> <td></td> </tr> </table>	13-17	Լավ	Չարց 1	Չարց 2	8-12	Բավարար	2 միավոր	2 միավոր	0-7	Անբավարար			0	Չներկայացած		
13-17	Լավ	Չարց 1	Չարց 2														
8-12	Բավարար	2 միավոր	2 միավոր														
0-7	Անբավարար																
0	Չներկայացած																
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐ	Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա:																
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ																	
Ներկայություն	Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:																
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ	Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվել: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:																
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:																

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՈՒՄ

Թեմա 1 Տնտեսագիտական մտքի պատմություն: (4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Թովմաս Ռոբերտ Մալթուսի տնտեսագիտական հայացքները: 2. Կառլ Մարքսի մարդկային հասարակության զարգացման տնտեսագիտական մեկնաբանությունը: 3. Ադամ Սմիթ՝ „տնտեսագիտության հայր,,: 4. Դավիդ Ռիկարդո „Արժեքի աշխատանքային տեսություն,,: 5.Վեսլի Զլեր Միտչել- տնտեսագիտությունը բնական գիտությունների նման կանխատեսելի դարձնելու ջանքերը: 6.Փոլ Սամյուելսոն – Միլթոն Ֆրիդման –տնտեսության մեջ կառավարության դերի հակադիր հայացքների մեկնաբանությունը:</p> <p>7. Իրվինգ Ֆիշեր-տնտեսական երեվույթները մաթեմատիկայի միջոցով մեկնաբանողը: „Փոխանակման հավասարում,,: 8. Յենրի Ֆորդ- Յոսքային գծի ներդրողը: Սահմանադրական իրավունքի հասկացությունը:</p>	<p>Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 6, 8, 9 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:</p>

Թեմա 2 Տնտեսագիտությունը հասարակական գիտությունների համակարգում:

(1 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Տնտեսագիտությունն առարկան, կապը մյուս գիտությունների հետ:</p> <p>2. Սակվության ուսմունք: Սահմանադրական իրավունքի գիտության մեթոդները:</p> <p>3. Տնտեսագիտության հիմնական հարցը:</p> <p>4. Տնտեսագիտության անհրաժեշտությունը կյանքում:</p> <p>5. Միկրոտնտեսագիտությունն էվ մակրոտնտեսագիտություն:</p> <p>6. Արտադրության գործոնները:</p> <p>7. Տնտեսական համակարգերի տեսակները:</p> <p>8. Ջոն Մեյնարդ Զեյնս-կառավարության դերը տնտեսությունում:</p>	<p>Հարցեր 1-8 - կարդացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 3-4 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:</p> <p>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:</p>

Թեմա 3 Տնտեսագիտության հիմնական օրենքներն ու հասկացությունները: (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար):	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Ապրանք, արժեք, ինքնարժեք, շահույթ, գին: Էությունը էվ նշանակությունը:</p> <p>2. Պահանջարկ, պահանջարկի օրենք:</p> <p>3. Առաջարկ, առաջարկի օրենք:</p> <p>4. Առաջարկի էվ պահանջարկի հավասարակշռություն, շուկայական գին:</p>	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով:</p> <p>Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը և ներկայացնում խնդրահարույց հարցերը:</p> <p>Հարցեր 1,2,3,4 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:</p>

Թեմա 4 Կառավարությունը էվ տնտեսությունը: (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Կառավարության դերն ու նշանակությունը տնտեսությունում, գործառույթներն ու սկզբունքները: Սա</p> <p>2. Բյուջե: ՀՀ բյուջետային համակարգը, կառուցման սկզբունքները:</p> <p>3. Հարկեր: Տեսակները, Էությունը, նշանակությունը էվ գործառույթները: Ավելացվաշ արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ:</p>	<p>Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն :</p> <p>Հարցեր 1-2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:</p> <p>Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):</p> <p>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են տեստային</p>

	առաջադրանքներ:
--	----------------

Թեմա 5 Տնտեսական մրցակցություն, մրցակցության պաշտպանություն , հակամենաշտրոհային քաղաքականություն: (4 ժամ դասախոսություն 4 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Տնտեսական մրցակցության էությունը, դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման գործում:</p> <p>2. Մրցակցային շուկա, տեսակները/կատարյալ մրցակցային շուկա, ոչ կատարյալ մրցակցային շուկա, օլիգոպոլիս, մենատիրություն/</p> <p>3. Օրինական մենատիրություն: էությունը, նշանակությունը եվ տեսակները:</p> <p>4. „ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին,, օրենքը: էությունը եվ նշանակությունը:</p> <p>5. Շուկայի համակենտրոնացում, համակենտրոնացման հայտարարագրում եվ պետական կարգավորում:</p> <p>6.Անբարեխիղճ մրցակցություն, տոսակները եվ կարգավորումը:</p> <p>7. Տնտեսական մրցակցության պաշտպանության մարմինը, ինդիկսները եվ գործառույթները:</p>	<p>Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:</p> <p>Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք: Թեմայի նշված հարցերն ընդհանուր գծերով մատուցվել է ուսանողներին «Պետության և իրավունքի տեսություն» առարկայից:</p> <p>Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը՝ սահմանադրաիրավական առումով ընկալելու քննարկվող հարցերի բովանդակությունը:</p> <p>Սովորողը նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:</p>

Թեմա 6 Արտադրություն եվ շուկայագիտություն (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Արտադրության էությունը, նշանակությունը:</p> <p>2. Կենսամակարդակ: Համախառն ազգային արտադրանք, համախառն ներքին արտադրանք, ընդհանրությունը եվ տարբերությունը:</p> <p>:</p> <p>3. Շուկայագիտություն, նրա չորս հիմնաքարերը:</p>	<p>Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն</p> <p>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են</p>

	<p>հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ: Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:</p>
--	--

Թեմա 7 Դրամ եվ ֆինանսական հաստատություններ (2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> Ապրանքափոխանակային հարաբերություններ, դրամի առաջացումը եվ առանձնահատկությունները: Ֆինանսներ, դրամի գործառույթները: Բանկեր եվ վարկեր: Էությունը եվ նշանակությունը, տեսակները: Կենտրոնական բանկի գործառույթները: 	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննարկման: Հարցեր 1-4 սեմինար - պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը, իրավական ակտերին և քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:</p>

Թեմա 8 Ձեռնարկությունների ֆինասավորումը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> Ձեռնարկությունների էությունը, նշանակությունը եվ ֆինանսավորման աղբյուրները/ներքին եվ արտաքին ֆոնդեր/: Կապիտալի շուկայի էությունը նշանակությունը, բնորոշ գործոնները եվ ռիսկերը: Արժեթղթերի շուկայի տեսակները: Արժեթղթերի տեսակները: Գործարար հաշվապահություն, հաշվեկշիռ, եկամուտների հաշվետվություն: 	<p>Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանը և հետաքրքրություն ներկայացնող հարցերը առաջադրում քննարկման: Հարցեր 2, 3, 5 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:</p>

Թեմա 9

Գործարարության հիմնադրումը (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Ձեռնարկիչ ձեռնարկատիրական գործունեություն հասկացությունների էությունն ու նշանակությունը:</p> <p>2. Ձեռարկությունների կազմակերպման տեսակները/ՍՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ, Կոոպերատիվ:</p> <p>3. Ձեռնարկությունների տեսակներ՝ կորպորացիաներ: հատուկ</p>	<p>Հարցեր 1-3 - Դասախոսություն՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով:</p> <p>Հարցեր 1-3 - ինքնուրույն աշխատանք. Ուսանողները ծանոթանում են դասագրքի նյութերին և հանձնարարված այլ գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են դասախոսությունների ընթացքում:</p> <p>Հարցեր 1-3 - անցկացվում է սեմինար պարապմունք. ուսանողները քննարկում են ձեռնարկությունների առանձնահատկությունները ըստ կարգավիճակի:</p> <p>Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:</p>

Թեմա 10 Տնտեսական կայունություն (2 ժամ դասախոսություն 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Գործարարության պարբերաշրջաններ, էությունն ու նշանակությունը: Փուլերի տեսակները:</p> <p>2. Գործարարության պարբերաշրջանի առաջացման պատճառները:</p> <p>3. Կառավարության ֆինանսական եվ դրամավարկային քաղաքականությունը եվ ազդեցությունը պարբերաշրջանի փուլերի վրա:</p> <p>4. Տնտեսական ակտիվության չափման ցուցանիշները/ՀԱԱ, ՀՆԱ, գործազրկություն/</p>	<p>Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են նյութին վերաբերող գրականությանը և վեր հանում խնդրահարույց հարցերը և ներկայացնում քննարկման: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:</p>

Թեմա 11 Համաշխարհային տնտեսություն (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Միջազգային առեվտուր, էությունն ու նշանակությունը:</p> <p>2. Միջազգային առեվտուրի բացարձակ եվ հարաբերական առավելությունները:</p> <p>3. Միջազգային առեվտուրի սահմանափակման լծակները:</p> <p>4. Տնտեսական ինտեգրացիա, նախադրյալները, փուլերը:</p> <p>5. ՀՀ ինտեգրացիոն հնարավորությունները:</p>	<p>Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման եղանակով: Ուսանողները ծանոթանում են ՀՀ ինտեգրացիոն հնարավորությունների մասին:</p>

	Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:
--	--

Թեմա 12 Ժամանակակից տնտեսական հիմնախնդիրներ, բնապահպանություն (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Ժամանակակից տնտեսական հիմնախնդիրների էությունը, նշանակությունը եվ տեսակները /աղքատություն/: 2. Հավասարություն եվ արդյունավետություն: 3. Շրջակա միջավայրի հասկացությունը: 4. ՀՀ շրջակա միջավայրի առանձնահատկությունները: 5. Բնապահպանության էությունն ու նշանակությունը: ավունքի երաշխիքները:	Հարցեր 1-5 անցկացվում է դասախոսություն: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:

Թեմա 13 Կոռուպցիան եվ հասարակությունը (4 ժամ դասախոսություն 4 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Կոռուպցիա: էությունը, նշանակությունը, պատմական արմատները եվ սահմանումները: 2. Կոռուպցիայի տնտեսական դրդապատճառները: 3. Կոռուպցիայի մակարդակը ՀՀ-ում:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: :

Թեմա 14 Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Սահմանադրական պարտականությունների հասկացությունը և հիմնական գծերը: Դրանց տարբերությունը իրավունքի այլ ճյուղերի կողմից սահմանված պարտականություններից: 2. Սահմանադրության և օրենքների պահպանումը: Այդ կապակցությամբ օրենսդրությամբ ներկայացվող պահանջները. (օրենքները չխախտելը, նպաստելը դրանց իրականացմանը, պահպանել սահմանադրական արժեքները, հարգել այլոց արժանապատվությունը): 3. Հայրենիքի պաշտպանությունը: Հայրենիքի պաշտպանության հասկացությունը և օրենսդրական ամրագրումը: Պարտադիր զինվորական ծառայության	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:

<p>դեպքում նախատեսվող տարկետումների հիմքերը: Պայմանագրային և այլընտրանքային ծառայության բովանդակությունը:</p> <p>4. Այլ պարտականություններ (հուշարձանների պաշտպանությունը, բնության և շրջակա միջավայրի պահպանությունը, հոգատարությունը երեխայի և անաշխատունակ ծնողի նկատմամբ, հիմնական ընդհանուր կրթություն ստանալը):</p>	
---	--

Թեմա 15	
Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը (4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Քաղաքացիության հասկացությունը: Պետության և քաղաքացու միջև կապերի բնույթը (իրավական և կայուն, անձին որպես քաղաքացի ճանաչելը, փոխադարձ իրավունքները և պարտականությունները): Հպատակությունը և անձին չհանձնելը:</p> <p>2. ՀՀ քաղաքացիության սկզբունքները: Քաղաքացիության ընդհանուր (արյան և հողի իրավունքի) և մասնավոր (իրավահավասարության, կամավորության, քաղաքացիությունից զրկելու անթույլատրելիության, բացառիկության, արտասահմանում ապրողների քաղաքացիության պահպանման, ազգությամբ հայերի քաղաքացիության ձեռքբերման պարզեցվածության, ամուսնու քաղաքացիության մեխանիկական ձեռքբերման մերժման) սկզբունքների բովանդակությունը: Երկքաղաքացիության բազմաքաղաքացիության) միջազգային իրավական և ներպետական ինդիքները:</p> <p>3. ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքերը (ծնունդը, քաղաքացիության ճանաչումը, ստանալը, վերականգնվելը, խմբակային ձեռքբերելը, այլ հիմքեր) և կարգը ըստ ՀՀ քաղաքացիության մասին օրենքի:</p> <p>4. ՀՀ քաղաքացիության դադարեցումը: Դրա հիմքերը (դուրս գալը, այլ պետության քաղաքացիություն ընդունելը) և կարգը: Քաղաքացիությունից դուրս գալուն խոչընդոտող հիմքերը: Քաղաքացիությունից զրկելը որպես բացառիկ միջոց:</p> <p>5. Երեխաների քաղաքացիության որոշման կարգը: Երեխաների քաղաքացիության որոշման դեպքում երեխայի շահերի հաշվառումը:</p> <p>6. Քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգը: Այդ գործընթացին մասնակցող մարմինների (ՀՀ Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը, նրա աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզաների և կոչումների վարչությունը, կառավարությունը, ՀՀ ոստիկանությունը, արտաքին գործերի նախարարությունը և դիվանագիտական ծառայությունները) պարտականությունները:</p> <p>7. Փախստականների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում: Փախստականի կարգավիճակ ստանալու կարգը: Փախստականի կարգավիճակ</p>	<p>Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 6-8 - ուսանողները նախօրոք ծանոթանում են քաղաքացիության վերաբերյալ գործերի լուծման կարգին և փորձում են կազմել քաղաքացիության մեջ ընդունվելու և դուրս գալու վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ձեռք բերելու վերաբերյալ փաստաթղթերը: Ծանոթանում են քաղաքական ապաստանի և դիվանագիտական ապաստանի ինստիտուտներին: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, տրվում են թեստային առաջադրանքներ:</p>

ստանալու դիմումի մերժումը և դրա գանգատարկման կարգը: 8. Զաղաքական ապաստանի իրավունքը և իրացման եղանակները: Դիվանագիտական ապաստանի ինստիտուտը:	
---	--

